

լով զանազան երկիրներու մէջ ապրող հայերու հաւատարմութիւնը եւ նկատելով որ ամենուրեք հայերուն համար խտրութիւն չկայ ոչ քաղաքային եւ քաղաքական իրաւունքներու, ոչ ալ սեփականատիրութեան իրաւունքի տեսակէտով, անտարկոյս անոնք չպիտի թոյլ տան աշխարհի դատաւարտութիւն մը Մոլոտովայի մէջ բնակող հայ ազգին համար միայն, որ ժամանակի մը դժբախտութեանց հետեւանքով զրկուեցաւ իր նախկին իրաւունքներէն:

Դաշնակից ցետութեանց նման մէկ զոհողութիւնը յառաջ բերելով ամենամեծ օգուտը այս իշխանապետութեան, անտարակոյս ուշքի պիտի բերէ երկիրը՝ որպէսզի ինք բոլոր հպատակներուն համահաւասար իրաւունքները չընորհէ հայ ազգին: Ո՞ւր պիտի մնայ ձայնը ազգի մը որ դարերէ ի վեր մաս կը կազմէ երկրին բնիկ տարրին):

Ը. Պոլսոյ խորհրդաժողովներուն ատեն, բոլոր դաշնակից պետութեանց բարեացակամութեան շնորհիւ, որոշուեցաւ որ օտարներն ալ կարենան սեփականատէր դառնալ իշխանապետութեան մէջ, ինչպէս ցոյց կուտայ կնքուած փոթոթօքը. եթէ օտարները, որոնք ոչ մէկ մաս ունեցան այս երկրին կարիքներուն հասնելու գործին մէջ, պիտի վայելին նման իրաւունք մը, ուրեմն ո՞րքան աւելի իրաւունք ունին վայելելու հայերը, որոնք զոհարեալ են Մոլոտովան ծաղկեցնելու համար: (Իբր փաստաթուղթ ցոյց տրուած են Փրանսերէն թերթեր՝ ի մասին յիշեալ փոթոթօքին 13-15 եւ 18-երորդ յօդուածներուն):

Թ. Թէ հայերը ունեցած են մշտական սեփականութիւն, կ'ապացուցանեն այն փաստաթուղթերը եւ հրովարտակները, որոնցմէ ոմանք մինչեւ այժմ կը մնան եւ ոմանք ալ կորսուած են պատերազմներու ատեն: Մէկ մասն ալ այդ հողերուն 1785-ի պատահարներէն յետոյ բռնի վաճառուեցան, որմէ յետոյ ջնջուեցաւ այդ իրաւունքը: (Իբր փաստ ցոյց կը տրուին Հրիսթէա Պուլաթու Արմէանուի եւ Վասիլէ Միսիր Արմէանուի հրովարտակները):

Ժ. Հայոց կրօնքը՝ ճանչցուած Օրթոօքս եկեղեցիէն՝ ընդունած է միայն արեւելեան վարդապետութիւնները. (տեսնել՝ Յունաց Միքայէլ պատրիարքին կոնդակը. Քարթէա

Րօսիանա 1799-ի Փայէլ Ա.ի օրով. անոր թարգմանութիւնը, 1850: Պուքըշ. Միհայ Սթուրգա իշխանին 1848 Նոյ. 24 թուակիր, 658 համար եւ պաշտօնաթերթին 1848-ի 94-րդ թիւին մէջ տպուած հրովարտակը՝ որ կ'արտօնէ Պաքովի մէջ կանգնել հայ-ուղղափառ եկեղեցի մը):

Յիշատակագրին կցուած է նաեւ Միքայէլ պատրիարքին ակնարկուած կոնդակը, որ բարձրագոյն է իր եւ 19 եպիսկոպոսներու եւ մետրոպոլիտներու կողմէ, ուղղուած է հայոց Գրիգոր կաթողիկոսին, եւ ուր կը ճանչցուի հայ եկեղեցւոյ ուղղափառութիւնը):

* * *

Յիշատակագրին կցուած է յաւելուած մը՝ ի մասին այն «հրովարտակներուն, որոնք տրուած են իշխանապետութեան իշխաններուն կողմէ հայոց, եւ որոնք անոնց քով պահպանուած են տակաւին՝ բացի անոնցմէ՝ որոնք կորսուած կամ այրած են պատերազմներու ատեն եւ անոնցմէ որոնք հրատարակուած են Ուրիշարներու միջոցաւ»:

Յաւելուածը կը յիշատակէ հետեւեալ իշխանական հրովարտակները. —

1252 Հոկտ. 30, Մաթէյ Իօան Նիքօլայէ
1256 Մայիս 25, Քօսթանթին Նիքօլայէ
1256 Նոյ. 7, Կրիկօրի Կիքա
1263 Յունիս 27, Իօան Թէօտօր
1265 Յունիս 2, Սքարլաթ Կիքա
1768 Յունիս 1, Իօան Թէօտօր
1764 Սեպտ. 23, Կրիկօրի Կիքա
1764 Հոկտեմբեր Կրիկօրի Կիքա
1765 Հոկտ. 6, Կրիկօրի Կիքա
1766 Փետր. 12, Կրիկօրի Կիքա
1796 Փետր. 5, Ալէքսանդրու Քալիմաքի
1799 Սեպտ. 24, Ալէքսանդրու Քալիմաքի
1803 Մարտ 7, Ալէքսանտրու Մօրուզ
1814 Մայիս 10, Ալէքսանտրու Քալիմաքի
1820 Հոկտեմբեր Միհայ Կրիկօրի Կիքա
1827 Յունիս 20, Իօան Սանտու Սթուրգա:
Յաւելուածը ի վերջոյ կը յիշեցնէ որ այդ հրովարտակները

Ա. Կ'ապացուցանեն թէ հայերը օգտակար եղած են իշխանին:

Բ. Կ'ապացուցանեն թէ օգտակար եղած են տեղացիներու առեւտուրին՝ արջառարուծու-